

ՔԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**Ա. Մ Է Ն Ա. Ն Գ Ա. Մ**

20 Ն

Պաղեսիոնի մեր բացառիկ արժեքներէն

ՏՈՔԴ. ՎԱՀԱՆ ԳԱԼՊԵԱՆԻՆ

Ամէն անգամ վախըս նոյն է, թէ կը ցամփի ահը արդէն,
 Առանց ջուրի անցնիմ պիտի ես այս կեանքի անապատէն,
 Եւ Աւետեաց Երկրին դեռեւս չը մօտեցած իյնամ ընդ միտք...
 Բայց կը զարնես ցուպըդ կըրկին, կը բըխի ջուրըդ իմ սրտէն:

Եղբայրներէս, ամէն անոնք որ ծառաւ են ինծի թող զան,
 Հանգչին վայրկեան մը ահիս փոլ, ըմպեն ջրէն անապական.
 Լաւ իմանան թող ամէնքը, յոգնած ու հէ՛ք ադամորդիք,
 Որ իմըս է ահը թէն, ջուրը իրենց Հօրն է սակայն:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Կ'ԵՐԹԱՄ Ա. ՀԱ. Ե Ս

Կ'երթամ անա ես,
 Դուն եկեր արդէն
 Նոյն երգը կ'երգես
 Սա երազ-հովսէն:

Նոյն խորհուրդին դէմ
 Դո՛ւն պիտի խոկաս,
 Նոյն բախսը դըժխեմ,
 Ինծի պէս սրգաս:

Եւ այս լոյսին մէջ
 Ու մարդոց դիմաց,
 Նոյն հրեով անեւջ
 Այրիս անիմաց:

Եւ անցնիս դուն ալ,
 Ու հուրը մընայ,
 Որ նոր հոգի մ'ալ
 Կիզուի, սրբբանայ:

Որ դեռ ուրիշներ
 Մըկըրսուին հըրով,
 Այրած հոգիներ
 Շըղթայուին սիրով:

Եւ ժամանակով
 Միջոցով բաժան,
 Կապուին նոյն խոկով,
 Նոյն գիրով դաժան:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ